ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N° ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԿՈՏԱՅՔԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿ

ԳԱՂՏՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ2015Թ

# ԿՈՏԱՅՔԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐՋԱՆԱԿ

**ՎՉԵԲ**

**Փաստաթղթի տեսակը (տարբերակը)**
**Գաղտնի** **Confidential**

Նախագիծ հ: 70007543
Անսաթիվ: Հոկտեմբեր 2015թ.

–


**ՎՍՊ | Փարսոնս Բրիկենհոֆ**
Վիկտորիա 150-182 Քուեյս
Սայֆոր Քուեյս, Մեծ Մանչեստեր, Մ50 3ՍՊ

Հեռ: +44 (0)161 886 2400
Ֆաքս: +44 (0)161 886 2401
**www.wspgroup.com**
**www.pbworld.com**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**1 Ներածություն ........ 1**

**2 Ծրագրի համառոտ ներկայացումը ........ 4**

2.1 Ծրագրի նկարագիրը ........ 4

2.2 Ծրագրի ազդեցությունների ամփոփումը ........ 7

**3 Իրավական և կանոնադրական շրջանակը ........ 9**

3.1 ՀՀ օրենսդրական շրջանակը ........ 9

3.2 ՎԶԵԲ-ի պահանջները ........ 10

3.3 Համեմատական վերլուծություն ........ **Error! Bookmark not defined.**

**4 Հողի օտարման և կենսապահովման վերականգնման նպատակները և սկզբունքները ........ 15**

4.1 Նպատակները ........ **Error! Bookmark not defined.**

4.2 Սկզբունքները ........ **Error! Bookmark not defined.**

**5 Հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործընթացը ........ 17**

5.1 Գործընթացի համառոտ ներկայացումը ........ 17

5.2 Ազդեցության ենթակա անձանց և գույքի ցուցակագրում ........ 21

5.3 Սոցիալ-տնտեսական հարցում ........ 22

5.4 Իրավունքների սխեմա ........ 22

5.5 Գնահատում ........ 31

5.6 Փոխհատուցման վճարում ........ 31

5.7 Կենսապահովման վերականգնում ........ 32

5.8 Հողի օտարման և կենսապահովման վերականգնման մանրամասն պլանի մշակում ........ 33

**6 Ելակետային տվյալներ և պաշարներ ........ 34**

6.1 Հողի օտարում և հողի օգտագործում ........ 35

6.2 Կենսապահովման ազդեցությունները ........ 36

**7 Տեղեկատվության բացահայտում, մասնակցություն և խորհրդատվություն ........ 39**

**8 Բողոքարկման մեխանիզմ ........ 40**

**9 ՀՕԿՎՊ իրականացում, բյուջե, վերահսկում և հաշվետվության ներկայացում ........ 40**

# ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ


| | | |
|---|---|---|
| *Աղյուսակ 3-1* | *Համեմատական վերլուծություն* | *13* |
| *Աղյուսակ 5-1* | *Իրավունքների սխեմա* | *24* |
| *Աղյուսակ 6-1* | *Վերամշակվող նյութերի գինը* | *38* |
| *Աղյուսակ 9-1* | *Մոնիտորինգի ցուցանիշներ* | *42* |


# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


ՀԱՎԵԼՎԱԾ Ա Բողոքարկման ձևը

# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացման և վերականգնման Եվրոպական բանկը (ՎԶԵԲ) տրամադրում է ֆինանսավորում ԵՄ պահանջների համապատասխան կոշտ թափոնների կառավարման կայանք կառուցելու համար:

ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը (ՔՆ) դիմել էր ՎԶԵԲ-ին Կոտայքի մարզում տարածաշրջանային սանիտարական աղբավայր նախապատրաստելու և ֆինանսավորելու խնդրանքով: Սա կլինի երկրի առաջին սանիտարական աղբավայրը: Կոտայքի մարզն ընտրվել է Երևանին մոտ գտնվելու պատճառով, որի նպատակն է ստեղծել ամբողջ երկրի համար ցուցադրական ծրագիր: Ծրագիրը մեղմացնելու է բնապահպանական վտանգները, հակազդելու է աղտոտմանը և հողի ու ջրային ռեսուրսների վնասակար ազդեցություններին: ՔՄ-ն նպատակ ուներ կառուցելու յոթ տարածաշրջանային սանիտարական աղբավայր ամբողջ երկրին սպասարկելու նպատակով: 2014 թ.-ի հուլիսի ինստիտուցիոնալ փոփոխությունների շնորհիվ պատասխանատվությունը փոխանցվեց ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը (ՏԿ ԱԻՆ), քանի որ տրամաբանորեն ավելի ճիշտ կլինի, եթե ՏԿ ԱԻՆ-ը դառնա ծրագրի համակարգողը, քանի որ համայնքները գտնվում են նախարարության իրավասության ներքո:

Այս ծրագիրը կոշտ թափոնների կառավարման առաջին նախագիծն է, որը Հայաստանում ֆինանսավորվում է ՎԶԵԲ-ի կողմից, և երկրում այն դառնալու է թափոնների կառավարման սեկտորի արդիականացման ազգային պլանի մաս: Առաջարկվում է որպեսզի Գեղարքունիքի մարզում տեղակայված Սևան քաղաքը, որը հյուսիսային մասով սահմանակից է Կոտայքի մարզին և մայրուղուն, նույնպես ընդգրկվի որպես ծրագրի մաս: Սևան քաղաքն ավելի մոտ է Հրազդանի աղբավայրին, քան Սևան քաղաքի առկա համայնքային աղբավայրին, որը գտնվում է Չկալովկա գյուղին մոտ: Ծրագիրն այժմ նաև պետք է ներառի թափոնների տեղափոխման երկու կայան, որոնք տեղակայված են Գեղարքունիքի մարզում (հնարավոր է Գավառի շրջանում և Մարտունու շրջանում), թեև վայրերը դեռևս ընտրված չեն: Ծրագիրն ընդգրկում է Հրազդանի առկա աղբանոցի բարելավումը, այն դարձնելով տարածաշրջանային սանիտարական աղբավայր, տարածաշրջանի մյուս վեց աղբանոցների փակումը,

թափոնների տեղափոխման և հավաքման մեքենաների, աղբարկղերի և թափոնների կառավարման սարքավորումների ձեռքբերումը, ինչպես նաև հավաքման ծառայությունների համար հայտարարվող մրցույթին օժանդակելը և աղբավայրի շահագործման ընկերության հիմնադրումը: Ինստիտուցիոնալ աջակցությունը պետք է կենտրոնանա գործող ընկերության ստեղծման և նրա հզորացման վրա, որը պետք է աշխատի որպես կայուն առևտրային միավոր: Համընդհանուր հետազոտության համաձայն թափոնների հավաքման մասնավոր մասնակցությունը սահմանվելու է մրցութային կարգով` թափոնների հավաքման ծառայությունների մասնակցությամբ:

Քննարկվում են ծրագրի փոփոխությունները, ներառյալ Գեղարքունիքի մարզի և Կոտայքի մարզի բոլոր բնակելի տարածքները կոշտ թափոնների կառավարման միացյալ համակարգում ներառելու տարբերակը: Այս տարբերակով կբարելավվի համայնքային կոշտ թափոնների հավաքումը և տեղափոխումը Հրազդանի նոր համայնքային աղբավայրի տեղանք, որը պետք է նախագծվի և շահագործվի ԵՄ չափանիշներին համապատասխան: Գեղարքունիքի մարզում ներկայումս թափոնները տեղափոխվում են 5 հիմնական աղբանոցներ: Եթե մարզն ընդգրկվի Կոտայքի կոշտ թափոնների ծրագրում, ապա նախատեսվում է, որ առկա աղբանոցները կփակվեն` դրանք հողաշերտով ծածկելով և հետագայում ամրանավորելով Հրազդանի աղբավայրը շահագործելի դառնալուց հետո, տվյալ վայր թափոնների տեղափոխումը կանխելու նպատակով, նույնը, ինչ նախատեսվում է Կոտայքի մարզի աղբանոցների համար:

Սույն փաստաթուղթը ծրագրով նախատեսվող հողի օտարման և կենսապահովման վերականգնման շրջանակն է (ՀՕԿՎՇ), այն ներկայացնում է Հողի օգտագործման նպատակները, սկզբունքները և պլանավորված մեթոդները, տնտեսական կայունության խախտումը և կենսապահովման վերականգնումը: Հնարավոր է ֆիզիկական տեղափոխության անհրաժեշտություն լինի, սակայն ներկայումս Հրազդանի աղբավայրի տեղանքի սահմանների վերաբերյալ ծրագրի տարածքային ընդգրկման, Սանիտարական պաշտպանության գոտու (ՍՊԳ) և մալուխների ու խողովակների անցումերի մասին տեղեկատվությունն ամբողջական չէ` Հրազդանի աղբավայրի տեղանքին ծառայություններ տրամադրելու համար (դեռ սահմանված չէ): Այս ՀՕԿՎՇ-ն տրամադրում է նաև ֆիզիկական տեղափոխությունն ընգրկելու շրջանակ, եթե այն պահանջվի ՍՊԳ-ի և համապատասխան ենթակառուցվածքի համաձայն: ՀՕԿՎՇ-ն տարբերվում է հողի օտարման և կենսապահովման վերականգնման պլանից (ՀՕՎԿՊ), քանի

պետք է ղեկավարվեն ընդհանուր գործընթացները և այն չափանիշները, որոնց հետագայում պետք է բավարարեն կենսապահովման վերականգնման և փոխհատուցման գործընթացները, քան կենսապահովման ազդեցությունների կառավարման որոշակի մանրամասները: Ծրագրի համար պետք է մշակվի մանրամասն ՀՕԿՎՊ, իսկ առաջին հերթին պետք է սահմանվեն ազդեցության ենթարկված թափոնների հավաքողների և հողի օտարման ելակետային տվյալները:

ՀՕԿՎՇ -ն նախապատրաստվել է ՀՀ օրենսդրության և ՎԶԵԲ -ի պահանջներին համապատասխան, ինչպես սահմանում է ՎԶԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը (2014 թ), մասնավորապ
Հողի օտարման, հարկադիր վերաբնակեցման և Տնտեսական կայունության խախտման մասին: ՀՕԿՎՇ-ի հետ կապված գործողությունները ներառված են Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանում (ԲՍԳՊ)՝ ԻՊ 5 -ի համաձայն: Սույն ՀՕԿՎՇ փաստաթուղթն իրականացնում, մասնակի իրականացնում կամ սահմանում է այն հետագա քայլերը, որոնք պետք է կատարվեն տվյալ ԲՍԳՊ գործողություններ 5.1.1 -ից 5,3,4 -ի համար, որոնք համապատասխանաբար փոփոխվել են:

ԻՊ 5-ը սահմանում է, որ “Հարկադիր վերաբնակեցումը վերաբերում է թե ֆիզիկական տեղափոխմանը և թե տնտեսական կայունության խախտումներին՝ որպես ծրագրի հետ կապված հողի օտարման կամ բնական ռեսուրսների նկատմամբ մուտքի թույլտվության սահմանափակման արդյունք”:

Սույն ՀՕԿՎՇ-նունի հետևյալ կառուցվածքը.

Բաժին 2. – Ծրագրի ընդհանուր նկարագիր – նկարագրում է ծրագիրը և ամփոփում տնտեսական կայունության խափանման հետ կապված հնարավոր ազդեցությունները:

Բաժին 3. – Իրավական և Կանոնադրական շրջանակ – նկարագրում է ազգային օրենսդրության շրջանակը և ՎԶԵԲ-ի պահանջները և սահմանված թերությունները, որոնք պետք է ուղղվեն:

Բաժին 4. – ՀՕԿՎՇ -ի նպատակները և սկզբունքները

Բաժին 5. – ՀՕԿՎՇ գործընթացը – նկարագրում է ՀՕԿՎՇ իրականացման գործընթացը

Բաժին 6. – Ելակետային տվյալներ և գույք – ներկայացնում է հնարավորությունների,

իրավունքների և գնահատման մեթոդների մասին անհրաժեշտ տեղեկատվություն:
Բաժին 7. - Հրապարակում և խորհրդատվություն
Բաժին 8. – Բողոքարկման մեխանիզմ
Բաժին 9. – ՀՕԿՎԾ իրականացում, բյուջե, վերահսկում և հաշվետվության ներկայացում:

# 2 ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

## 2.1 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ Քաղաքաշինության նախարարությունը (ՔՆ) դիմել էր ՎԶԵԲ-ին Կոտայքի մարզում տարածաշրջանային սանիտարական աղբավայր նախապատրաստելու և ֆինանսավորելու խնդրանքով: Սա կլինի երկրի առաջին սանիտարական աղբավայրը, որը կտեղակ ներկա աղբանոցի տարածքում: Կոտայքի մար Երևանին մոտ գտնվելու պատճառով, որի նպատակն է ստեղծել ամբողջ երկրի համար ցուցադրական ծրագիր: Տես նկար 2-1, Ծրագիրը մեղմացնելու է բնապահպանական վտանգները, հակազդելու է աղտոտմանը և հողի ու ջրային ռեսուրսների վնասակար ազդեցություններին: ՔՄ-ն նպատակ ուներ կառուցելու յոթ տարածաշրջանային սանիտարական աղբավայր ամբողջ երկրին սպասարկելու նպատակով: 2014 թ.-ի հուլիսի ինստիտուցիոնալ փոփոխությունների շնորհիվ պատասխանատվությունը փոխանցվեց ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը (ՏԿ ԱԻՆ), քանի որ տրամաբանորեն ավելի ճիշտ կլինի, եթե ՏԿ ԱԻՆ-ը դառնա ծրագրի համակարգողը, քանի որ համայնքները գտնվում են նախարարության իրավասության ներքո:

**ՆԿԱՐ 2-1 Հայաստանի քարտեզը**




Այս ծրագիրը կոշտ թափոնների կառավարման առաջին նախագիծն է, որը Հայաստանում ֆինանսավորվում է ՎԶԵԲ-ի կողմից, և երկրում այն դառնալու է թափոնների կառավարման սեկտորի արդիականացման ազգային պլանի մաս: Առաջարկվում է Գեղարքունիքի մարզում տեղակայված Սևան քաղաքը, որը հյուսիսային մասով սահմանակից է Կոտայքի մարզին և մայրուղուն, նույնպես ընդգրկվի որպես ծրագրի մաս: Սևան քաղաքն ավելի մոտ է Հրազդանի աղբավայրին, քան Սևան քաղաքի առկա համայնքային աղբավայրին, որը գտնվում է Չկալովկա գյուղին մոտ: Ծրագիրն այժմ նաև պետք է ներառի թափոնների տեղափոխման երկու կայան, որոնք տեղակայված են Գեղարքունիքի մարզում (հնարավոր է Գավառի շրջանում և Մարտունու շրջանում), թեև վայրերը դեռևս ընտրված չեն: Ծրագիրն ընդգրկում է Հրազդանի առկա աղբանոցի բարելավումը, այն դարձնելով տարածաշրջանային սանիտարական աղբավայր, տարածաշրջանի մյուս վեց աղբանոցների փակումը, թափոնների տեղափոխման և հավաքման մեքենաների, աղբարկղերի և թափոնների կառավարման սարքավորումների թերք բերումը, ինչպես ն թափոնների հավաքման ծառայությունների համար հայտարարվող մրցույթին օժանդակելը և աղբավայրի շահագործման ընկերության հիմնադրումը:

Քննարկվում են ծրագրի փոփոխությունները, ներառյալ Գեղարքունիքի մարզի և Կոտայքի մարզի բոլոր բնակելի տարածքները կոշտ թափոնների կառավարման միացյալ

համակարգում ներառելու տարբերակը: Այս տարբերակով կբարելավվի համայնքային կոշտ թափոնների հավաքումը և տեղափոխումը Հրազդանի նոր համայնքային աղբավայրի տեղանք, որը պետք է նախագծվի և շահագործվի ԵՄ չափանիշներին համապատասխան: Գեղարքունիքի մարզում ներկայումս թափոնները տեղափոխվում են 5 հիմնական աղբանոցներ: Եթե մարզն ընդգրկվի Կոտայքի կոշտ թափոնների ծրագրում, ապա նախատեսվում է, որ առկա աղբանոցները կփակվեն՝ դրանք հողաշերտով ծածկելով և հետագայում ամրանավորելով Հրազդանի աղբավայրը շահագործելի դառնալուց հետո, տվյալ վայր թափոնների տեղափոխումը կանխելու նպատակով, նույնը, ինչ նախատեսվում է Կոտայքի մարզի աղբանոցների համար:

Ծրագրի իրականացման վայրը Կոտայքի մարզն է, ինչպես ներկայացված է ստորև, նկար 2-2-ում:

Նկար 2-2 Կոտայքի մարզի քարտեզը




## 2.2 ԾՐԱԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Հրազդանի թափոնների կառավարման նոր կայանքը կբարելավի կոշտ թափոնների հավաքման աշխատանքները և կառավարումը Կոտայքի մարզում և Սևանում: Հողի օտարման և կենսապահովման խնդիրները հաշվի առնելով, ծրագրի տեղանքն ընտրվել է մեծ ուշադրությամբ բնակավայրերում ցանկացած ազդեցություններից խուսափելու համար, և օգտագործվելու է արդեն առկա

աղբանոցին կից տարածքը, այսպիսով նվազեցնելով տեսողական ազդեցությունը և հողի օգտագործումը:

Ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր են որոշ ֆիզիկական փոփոխություններ, որոնք պայմանավորված են Հրազդանի նոր աղբավայրի սահմանազծի և հարակից ցանկացած ճանապարհի, մայ ու խների և խողովակաշարի (որոնք կարող են պահանջվել) առանձնահատկությունները ծրագրի Սանիտարական պաշտպանության գոտու (ՍՊԳ) առանձնահատկությունների պահանջներին համապատասխանեցմամբ: ՍՊԳ-ի ծավալը հողային պահանջների և ֆիզիկական տեղափոխությունների համար որոշում կայացնելու կարևոր մասն է կազմելու: Գույքի և հողի օգտագործումը կարող է ազդեցության ենթարկվել, ինչպես օրինակ փոքր սեփականությունը՝ ամառային այգիով և ցանկապատով, որը գտնվում է Հրազդանի ներկա աղբանոցի մուտքի հարևանությամբ և Հրազդանի տեղակայքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը: Սա կարող է դասվել ՍՊԳ-ի խնդիրների շրջանակին: Հրազդանի տեղակայքի տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերը կարող են լինել մերձակայքի բնակավայրերի բնակիչների սեփականությունը և օգտագործվել որպես փոքրածավալ անհատական տնտեսություններ: Պտղատու այգին նույնպես կարող է բացասական ազդեցություններ կրել շինարարական աշխատանքներից, սակայն այս փուլում ֆիզիկական տեղափոխությունը չի կարող հաստատվել:

Ծրագրի իրականացման արդունքում հնարավոր է տնտեսական կայունության խախտում, այն է՝ գույքի կորուստ կամ մուտքի հնարավորության կորուստ, որը ոչ պաշտոնապես թույլատրված աղբ հավաքողների եկամուտի կամ ապրուստի միջոցների աղբյուր է: Ծրագիրն ազդեցություն կթողնի վեց ավելի փոքրածավալ աղբանոցների վրա, որոնք տեղակայված են Աբովյանում Կոտայք, Չարենցավանում, Հրազդանում, Սևանում, Ծաղկաձորում և Եղվարդում: Հրազդանի ներկայիս աղբանոցը փակվելու է և տեղանքում՝ աղբանոցի կողքին, տեղակայվելու է նոր, ԵՄ չափանիշներին համապատասխան կայանք: Առկա աղբանոցների փակման և Հրազդանի կոշտ թափոնների կառավարման նոր կայանքի մուտքի իրավունքի սահմանափակման արդյունքում մոտավորապես 20-25 մարդ ովքեր տեղանքում հավաքում և վերամշակում են թափոնները, կկորցնեն ապրուստի միջոցների հնարավորությունը և եկամուտի աղբյուրը: Սա բացասական ազդեցություն կթողնի ներկայումս

տեղանքում աղբի հավաքման և վերամշակման գործունեություններում ընդգրկված մարդկանց վրա:

Աղբանոցների փակումը ազդեցություն կթողնի կոշտ թափոնների կառավարման ընկերությունների աշխատակիցների վրա, ովքեր ստանձնում են աղբանոցների տեխսպասարկման աշխատանքները: Կոշտ թափոնների կառավարման ընկերությունները հավանաբար կկրճատեն իրենց աշխատուժը, քանի որ կառավարման ենթակա աղբանոցները կպակասեն: Այս փուլում հայտնի չէ, թե աշխատողների ինչ ծավալ կարող է ազդեցության ենթարկվել: Ավելին, այդ աշխատողների հետագա զբաղվածության վիճակը պայմանավորված է արտաքին գործոններից և Հայաստանում կոշտ թափոնների կառավարման համակարգում ավելի մեծ համակարգային փոփոխություններից:

Որոշ աղբանոցների աղբ հավաքողների հետ հարցազրույցի արդյունքում պարզվեց, որ նրանք տվյալ տեղանքում տասնամյակներ շարունակ զբաղվել են այդ գործունեությամբ և որ աղբի հավաքելը և վերամշակելը նրանց եկամուտի միակ աղբյուրն է: Տուժած մարդկանց և կենսապահովման վերականգնման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են Բաժին 6-ում:

# 3 ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Ծրագիրը պետք է այնպես կառուցվի, որպեսզի բավարարի ազգային օրենսդրության պահանջներին ու չափանիշներին և ՎԶԵԲ-ի քաղաքականությանը, մասնավորապես ՎԶԵԲ ԻՊ5-ի պահանջներին՝ հողի օտարում, հարկադիր տարաբնակեցում և տնտեսական կայունության խախտում:

## 3.1 ՀՀ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը (ընդունված 1995թ. և փոփոխված 2005թ.) պարունակում է Հոդված 31-ը, որը սահմանում է. “Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, դատական կարգով”: Մասնավոր սեփականությունը կարող է օտարվել հանրային և պետական կարիքների համար միայն բացառիկ դեպքերում և նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Հողի օտարման և փոխհատուցման հարցերը քննարկված են Հողի մասին օրենք, հոդված 102, 104-ում, Քաղաքացիական օրենսգրքում, (1998թ.) և 2006թ. ընդունված “Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին" ՀՀ օրենքում:

Օտարման ենթակա հողի և/կամ կառույցների համար փոխհատուցումը պետք է սահմանվի ՏԿ ԱԻՆ-ի և ազդեցության ենթակա անձանց (ԱԵԱ) միջև կնքված համաձայնագրով, հաշվի առնելով շուկայական գինը և վնասները, ներառյալ հետևանքային վնասները և կարող է ներառել հողի և/կամ կառույցների փոխանակում: Սեփականատիրոջը տրվում է համապատասխան փոխհատուցում իրենց գույքի օտարման դիմաց: Փոխհատուցումը կազմում է օտարված գույքի շուկայական արժեքին գումարած լրացուցիչ 15% -ը:

Անշարժ գույքի կամ անշարժ գույքի իրավունքի գնահատումը պետք է կատարվի «Անշարժ գույքի գնահատման» մասին օրենքով (որն ընդունվել է 2005թ.) սահմանված գործառույթների համաձայն: Օրենքը սահմանում է անշարժ գույքի գնահատման գործընթացի հիմնադրույթները և կարգավորում անշարժ գույքի գնահատմանը վերաբերող հարաբերությունները: Անշարժ գույքի գնահատման գործունեությունը պահանջում է լիցենզավորում, ուստի այս գործունեությունը պետք է կատարվի իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից, անշարժ գույքի գնահատման արտոնագիր ստանալուց հետո, ինչպես նախատեսում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը:

## 3.2 ՎԶԵԲ-Ի ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՎԶԵԲ-ի ԻՊ 5՝ Հողի օտարում, հարկադիր վերաբնակեցում և տնտեսական կայունության խափանումը սահմանում է, որ. “հարկադիր վերաբնակեցումը վերաբերում է թե՛ ֆիզիկական տեղափոխմանը և թե՛ տնտեսական կայունության խախտմանը, որն առաջանում է ծրագրով նախատեսված հողի օտարման կամ կենսապահովման միջոցների կամ բնական ռեսուրսների նկատմամբ մուտքի հնարավորության սահմանափակման հետևանքով”:

“Վերաբնակեցումը համարվում է հարկադիր, երբ ազդեցության ենթակա անձինք կամ համայնքները հողի օտարումը մերժելու իրավունք չունեն, որի արդյունքը վերաբնակեցումն է”:

‘Վերաբնակեցված անձինք դասակարգվում են որպես անձինք i) ովքեր հողի նկատմամբ ունեն օրինական իրավունք (ներառյալ ստանդարտ և սովորութային

իրավունքները, որոնք ընդունվել են ազգային օրենքներով) ii) ովքեր ցուցակագրման ժամանակ չեն ունեցել օրինական իրավունքներ, սակայն ունեն հողի նկատմամբ պահանջ, որն ընդունվում կամ ընդունելի է ազգային օրենսդրությամբ կամ iii) Օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում չունեցող հողի սեփականատերեր, ովքեր զբաղեցնում են այդ հողը”[1]

ԻՊ 5-ի նպատակները ներառում են հետևյալը.

խուսափել հարկադիր վերաբնակեցումից կամ առնվազն նվազագույնի հասցնել այն, եթե իրագործելի է, գտնելով ծրագրի այլընտրանքային նախագծեր:

հողի ձեռքբերումից առաջացող բացասական սոցիալական և տնտեսական ազդեցությունները կամ ազդակիր անձանց հողի օգտագործման մուտքի իրավունքի սահմանափակումները մեղմացնել հետևյալ կերպ՝ i) գույքի կորստի համար տրամադրել փոխհատուցում՝ փոխարինման արժեքի չափով, ii) երաշխավորել, որ վերաբնակեցման գործունեություններն իրականացվում են տեղեկատվության համապատասխան բացահայտման, խորհրդատվության և ազդեցության ենթակա անձանց տեղեկացված մասնակցության միջոցով:

[1] ՎԶԵԲ ԻՊ 5: ‘Օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում չունեցող հողի սեփականատերերը, ովքեր զբաղեցնում են այդ հողը կարող են լինել սովորական օգտագործողները, անասնաբույծերը, երկրի ներսում տեղահանված անձինք, կամ նորաբնակները, ովքեր հողի նկատմամբ ունեն պահանջներ կամ օգտագործում են հողը առանց օրենքով սահմանված իրավունքի և այլոք, ովքեր կարող են ունենալ ազդակիր հողի կամ այլ ռեսուրսների նկատմամբ ցմահ կամ սովորական օգտագործման իրավունք, որոնք նախատեսված չեն կամ ընդունելի չեն նախատեսվելու ազգային օրենսդրությամբ :

Բարելավել կամ առավելագույն չափով վերականգնել վերաբնակեցված անձանց կենսապահովման միջոցները և կենսամակարդակն այն չափով, որն առկա էր նախքան ծրագիրը, օգտագործելով այնպիսի միջոցառումներ, որոնք կարող են հիմնված լինել աշխատավարձի կամ կազմակերպության վրա նպաստելով նրանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի կայուն բարելավմանը

Բարելավել վերաբնակեցված մարդկանց կենսապայմանները ապահովելով նրանց համապատասխան կացարաններով և վերաբնակեցված տեղանքներում վարձակալների անվտանգությամբ:

## 3.3 ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային օրենսդրության և ՎԶԵԲ-ի պահանջների միջև առկա են որոշակի տարբերություններ: Որպես հիմնական տարբերություններ առանձնացվում են օրենսդրական

պահանջների չպահպանմամբ, առանց պետական գրանցման իրավունքի բնակիչների, վարձակալների և հողօգտագործողների ընդունման և փոխհատուցման տարբերությունները, ինչպես նաև խոցելի ազդակիր անձանց կենսապահովման վերականգնման տարբերությունը: Մյուս կողմից, երբ ՎԶԵԲ-ը պահանջում է գույքի և սեփականության փոխհատուցումը շուկայական արժեքով, ազգային օրենսդրությունը սահմանում է փոխհատուցման գումար շուկայական արժեքին գումարած 15% լրացուցիչ վճարում: Ստորև ներկայացված աղյուսակ 3-1-ում ամփոփված է ազգային օրենսդրության և ՎԶԵԲ-ի պահանջների հիմնական տարբերությունները և սահմանվում են այն առաջարկված միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն:

Տարբերությունների դեպքում պետք է հետևել ՎԶԵԲ-ի պահանջներին կամ ՀՀ օրենսդրության պահանջներին, եթե դրանք ավելի շահավետ են ազդակիր անձանց և տնային տնտեսությունների համար:

Աղյուսակ 3-1 Համեմատական վերլուծություն

| ԱՌԱՐԿԱ | ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐ | ՎԶԵԲ-Ի ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (2014) | ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ |
|---|---|---|---|
| Հողի սեփականատերեր և վարձակալներ | Հողի փոխհատուցում միայն հողի իրավական կարգավիճակ ունեցող սեփականատերերին և վարձակալներին | իրավական կարգավիճակ չունենալը փոխհատուցման և/կամ վերականգնման համար արգելք չէ: իրավական կարգավիճակ չունեցող հողօգտագործողները կստանան փոխհատուցում ոչ-հողային գույքի համար: | Ընդունել միջոցներ ոչ պաշտոնապես թույլատրված վարձակալների, հողի օգտագործողների իրավունքները և ոչ պաշտոնական եկամուտները ճանաչելու համար և սահմանել համապատասխան փոխհատուցում և կենսապահովման վերականգնման միջոցառումներ |
| Հողի օգտագուծողներ | Բերքի կորստի համար փոխհատուցումը տրվում է միայն հողի գրանցված սեփականատերերին | Իրավասու է փոխհատուցման բերքի համար անկախ իրավական կարգավիճակից և եկամուտը պետք է վերականգնվի այն մակարդակով, որն առկա էր ծրագրից առաջ | Ճանաչել հողի մշակումից ստացված բերքը կամ ապրուստի միջոցները, որոնք մշակվել են օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով հողօգտագործողների կողմից |
| Տներ և այլ կառույցներ | Փոխհատուցվում են ազդեցության ենթակա բոլոր տները/կառույցները, որոնք վնասվել/քանդվել են ծրագրի իրականացման հետևանքով, բացի չգրանցված կառույցներից | Փոխհատուցում նաև չգրանցված կառույցների համար և պետական գրանցում չունեցող անձանց | Ճանաչել այն տները և կառույցները, որոնք պատկանում կամ զբաղեցվել են օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով անձանց կողմից և սահմանել փոխհատուցման համապատասխան միջոցներ՝ ամբողջովին փոխարինման արժեքով, որը ներառում է ցանկացած գործարքի համար պահանջվող վճարները և հարկերը |
| Հողի գնահատում | Հողի գնահատումը հիմնված է շուկայական ներկա արժեքի վրա, գումարած գնահատված արժեքի 15% -ը: | Հողի գնահատումը հիմնված է փոխարինման արժեքի շուկայական ներկա տոկոսադրույքի վրա ներառյալ գրանցման բոլոր գումարները, գործարքների ծախսերը և հարկերը, որոնք կարող են պահանջվել հողի օտարման գործընթացում | Հողի գնահատման միջոցառումները հողի լիարժեք արժեքով փոխարինման հնարավորություն կտան, ներառյալ գրանցման վճարները, գործարքների ծախսերն ու հարկերը, որոնք առաջանում են հողի օտարման ժամանակ |
| Կենսապահովման | | Մեծ կորուստների և վերատեղակայման | Մշակել Կենսապահովման վերականգնման շրջանակ և |

| | | | |
|---|---|---|---|
| վերականգնում | Դրույթներ չկան եկամուտի/կենսապահովման վերականգնման, խիստ ազդեցության ենթակա ԱԵԱ-երի նպաստների և խոցելի խմբերի վերաբնակեցման ծախսերի վերաբերյալ | ընթացքում ԱԵԱ-երից ծախսերի վերականգնում անկախ ԱԵԱ-երի իրավական կարգավիճակից: | հետագայում՝ ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան մանրամասն պլան, որը կենտրոնանում է թե  պաշտոնապես թույլատրված և թե ոչ պաշտոնապես թույլատրված կենսապահովմանը, որոնք բացասական ազդեցություններ են կրել ծրագրից |
| Վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) մշակում | ՎԳՊ-ի պատրաստման կամ հաստատման համար պահանջներ չկան | Պահանջում է ՎԳՊ-ի նախապատրաստում, հաստատում և վերահսկում | Եթե կիրառելի է, մշակել ՎԳՊ՝ ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան |
| Հանրային խորհրդատվություն և հրապարակայնացում | Որևէ պահանջ չկա ազդեցության ենթակա անձանց խորհրդատվություն ապահովել, միայն տեղեկատվության տարածում հանրային լսումների միջոցով | Պահանջում է հրապարակում և խորհրդատվություն ազդեցության ենթակա անձանց հետ, ՎԳՊ/ԿՎՊ նախապատրաստման ընթացքում, ինչպես նաև ՎԳՊ/ԿՎՊ վերջին տարբերակի հրապարակում | Մշակել Շահագրգիռ կողմերի մասնակցության պլան, որը  համապատասխանում է  ՎԶԵԲ-ի պահանջներին և հնարավորություն է տալիս ապահովել ազդեցության ենթարկված կողմերի իմաստալից մասնակցությունը ծրագրի իրականացման բոլոր փուլերում |
| Բողոքարկման մեխանիզմ | Դիմումների, բողոքների, առարկությունների և առաջարկությունների ներկայացումը ձեռք բերողին կամ պետական լիազորված մարմնին՝ օտարման գործընթացի յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև դատարան դիմելը՝ ՀՀ օրենսդրության համաձայն | Պահանջում է բողոքարկման մեխանիզմի սահմանում՝ վերաբնակեցման հետ կապված ԱԵԱ-երի հարցերին և մտահոգող խնդիրներին պատասխանելու համար | Մշակել և ընդունել ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան բողոքարկման մեխանիզմ և հնարավորություն տալ ազդեցության ենթակա անձանց և հանրությանը ներկայացնել ծրագրի հետ կապված մեկնաբանություններ, բողոքներ և առաջարկություններ՝ ծրագրի իրականացման բոլոր փուլերում |

# 4 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

## 4.1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հողի օտարման և կենսապահովման վերականգնման նպատակները հետևյալն են.

- Խուսափել կամ նվազեցնել վերաբնակեցումը, տնտեսական կայունության խախտումը և հողի օտարումը
- Քննարկել իրագործելի այլընտրանքային նախագծեր
- Մեղմացնել հողի օտարումից առաջացող սոցիալ-տնտեսական բացասական ազդեցությունները
- Ժամանակին փոխհատուցել գույքի կորստի համար՝ փոխարինման գնով, և
- Բարելավել կամ առավելագույն չափով վերականգնել կենսապահովումը և կենսամակարդակը

## 4.2 ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնական սկզբունքները, որոնցով պետք է ղեկավարվել հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործընթացում, հետևյալն են.

- Հողի օտարումը, կենսապահովման վերականգնումը և ԱԵԱ-երին փոխհատուցումը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության և ՎԶԵԲ-ի ԻՊ 5-ի պահանջներին համապատասխան:
- Պետք է հաշվի առնել և մեղմացնել թե ֆիզիկական և թե տնտեսական կորուստները:
- Շինարարական նպատակներով հողի ժամանակավոր զբաղեցման հետ կապված ազդեցությունները նույնպես կարող են հանգեցնել փոխհատուցման կամ այլ օգնության, և այլն
- Պետք է սահմանվեն բոլոր դասակարգերի ազդակիր մարդկանց իրավունքները (ներառյալ օրենսդրության

պահանջների չպահպանմամբ, անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցում չունեցող հողօգտագործողները)

Պետք է օգտագործվեն կայուն մեթոդներ տուժած գույքը կամ ռեսուրսները կամ նրանց նկատմամբ մուտքի հնարավորությունը և կենսապահովման ազդեցությունները գնահատելու համար, ընդգրկելով համապատասխան որակավորում ունեցող անկախ կողմերին:

Պետք է փոխհատուցում տրամադրվի տուժած սեփականության և կառույցների համար, անկախ դրանց իրավական կարգավիճակից

Պետք է բարելավվեն ազդեցության ենթակա անձանց կենսագործունեությունը և կենսամակարդակը կամ առնվազն վերականգնվեն այն մակարդակները, որոնք առկա են եղել նախքան ծրագիրը:

Ազդակիր հողի և կառույցների բոլոր սեփականատերերը, այն զբաղեցնողները և օգտագործողները, ովքեր կասեցման ամսաթվի դրությամբ համարվում են օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում ունեցող հողի և գույքի սեփականատերեր կամ օրենսդրության պահանջների չպահպանմամբ, պետական գրանցում չունեցող հողի և գույքի օգտագործողներ, իրավասու են ստանալ փոխհատուցում, կենսապահովման վերականգնման հնարավորություն կամ այլ օգնություն:

Կընդունվեն նաև գործընթացներ փոխհատուցելու այն ԱԵԱ-երին, ովքեր համարվում են օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում ունեցող հողի և գույքի սեփականատերեր և կասեցման ամսաթվի դրությամբ մնում են չբացահայտված:

Փոխհատուցումը պետք է տրվի նախքան վերաբնակեցումը կամ հողի նկատմամբ մուտքի հնարավորություն ստանալը:

ՏԿ ԱԻՆ-ը պետք է ֆինանսավորի փոխհատուցումները և ՀՕԿՎԾ-ով, ինչպես նաև հողի օտարման և կենսապահովման վերականգնման մանրամասն պլանով (ՀՕԿՎՊ) սահմանված ցանկացած գործունեություն, եթե խնդիրը օտարումն է:

Հողի օգտագործման բոլոր գործարքները, ինչպես նաև փոխհատուցման միջոցառումները, կենսապահովման վերականգնման գործունեությունները և այլ օգնություն պետք է փաստաթղթերով հաստատված լինեն:

ԱԵԱ-ներին հնարավորություն կտրվի մասնակցելու որոշումներ կայացնելու գործընթացին ընդգրկուն և իմաստալից հանրային խորհրդատվությունների միջոցով:

ԱԵԱ-ների համար պետք է սահմանվի բողոքարկման կառավարման հատուկ մեխանիզմ և բոլոր հարցերը, հարցումները և բողոքները պետք է գրանցվեն բողոքների գրանցամատյաններում:
Պետք է սահմանվեն վերահսկման և գնահատման գործընթացները՝ կենսապահովման վերականգնման և վերաբնակեցման միջոցները գնահատելու նպատակով:

# 5 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## 5.1 ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Հողի օտարման և կենսապահովման վերականգնման միջոցառումները պետք է ձեռնարկվեն ՀՀ օրենսդրության և ՎԶԵԲ-ի ՀՊ 5-ի պահանջներին համապատասխան: Սույն բաժինը նկարագրում է ՀՕԿՎԾ-ի իրականացման պլանավորված գործընթացը, ռրըրևնեֆեփկպմացկած մանրամասն քայլերը:

ՀՕԿՎԾ-ի մշակման ժամանակ Հրազդանի կոշտ թափոնների կայանքի մանրամասն նախագծերը, կապված տեղանքի սահմանագծի, ՍՊԳ սահմանագծի և դրանց ենթակառուցվածքների հետ, ինչպես օրինակ ճանապարհները, մալուխների և խողովակաշարերի անցումները, (որոնք կարող են պահանջվել) առկա չէին, հետևաբար հողի օտարումը չէր կարող հաստատվել:
ՀՀ կանոնակարգեր 245-75-ի համաձայն՝ «Սանիտարական նորմեր և կանոններ» ՍՊԳ-ն կարող է ավտոմատ կերպով նախատեսել 300 մ՝ տարածաշրջանային և համայնքային բոլոր աղբավայրերի համար: Ու ստի հնարավոր է, որ հողի օտարումը ներառի որոշ գյուղատնտեսական նշանակության հողեր, ինչպես նաև Հրազդանի առկա աղբանոցի մուտքի մոտ տեղակայված բերքատու այգին: Ազդեցության ենթարկված աղբ հավաքող անձանց փաստացի քանակը միայն հաշվարկ է, որը հիմնված է ՔՈՎԻ կողմից կատարված նախնական ուսումնասիրության տվյալների վրա, և ներկայացվել է թափոնների հավաքման գործառույթներում ընդգրկված

անձանց, կոշտ թափոնների կառավարման ընկերությունների և համապատասխան կառավարման մարմինների հետ ունեցած հարցազրույցների հիման վրա:

ՀՕԿՎԾ-ն շրջանակ է, որը սահմանում է հողի օտարումը և կենսապահովման վերականգնումը և նրա ասպեկտները: Երբ պատրաստ կլինեն ամբողջական մանրամասն նախագծերը և համապատասխան ելակետային տվյալներով կհաստատվեն թափոնները հավաքող անձանց քանակը, անհրաժեշտություն կլինի մշակել հողի օտարման և կենսապահովման վերականգնման պլանը (ՀՕԿՎՊ), ստորև ներկայացված քայլերի համաձայն:

i) Ծրագրի ազդեցությունների և ազդակիր անձանց բնորոշումը, ներառյալ հետևյալը.

- Ծրագրի տարածքի և ազդակիր տնտեսությունների/հողամասերի քարտեզագրում, ներառյալ հողի դասակարգը, սեփականատերերը և հողի օգտագործման բնույթը, մասնավոր և հանրային հող, ձեռնարկատիրական գործությունները և գույքը և համայնքների բնական ռեսուրսների տեղանքները:
- Ազդեցության ենթակա գույքի և անձանց ցուցակագրում, որը հնարավորություն կտա կազմել հողի նկատմամբ իրավական կարգավիճակ ունեցող և իրավական կարգավիճակ չունեցող անձանց և նրանց կենսագործունեության ցուցակը և բնորոշել այն անձանց, ովքեր իրավասու են փոխհատուցման և/կամ օգնության: Ազդեցության ենթակա թափոն հավաքողների քանակի մասին նախնական տվյալների արդյունքները ներառված են ծրագրի նախորդ փաստաթղթերում, այդուհանդերձ անհրաժեշտ է ավելի մանրամասն ցուցակագրում՝ սահմանելու համար նպաստ ստանալու նրանց իրավունքը:
- Սոցիալ-տնտեսական ուսումնասիրություն՝ ցուցակագրման տվյալները լրացնելու և ազդակիր անձանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրման ու նրանց կենսագործունեության ազդեցության հաշվարկման համար՝ փոխհատուցման և կենսապահովման վերականգնման արդարացի միջոցառումները սահմանելու նպատակով: Սա նաև կօգնի սահմանելու ցանկացած խոցելի անհատներին կամ խմբերը, ովքեր

լրացուցիչ օգնության կարիք կունենան: Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունը նաև ընդգրկելու է իրավասու և ոչ իրավասու հողի սեփականատերերին և օգտագործողներին, ում հողատարածքը ենթակա է օտարման՝ Հրազդանի կայանքի կամ համապատասխան ենթակառուցվածքի համար:

- Ազդակիր գույքի, հողամասերի, սեփականության և կառույցների գույքագրումը հիմնված է քարտեզագրման և ցուցակագրման աշխատանքների վրա, դրանք կօգտագործվեն հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործունեությունները վերահսկելու համար:
- Խորհրդատվական ժողովներ հանրության հետ՝ ծրագրի, ժամանակացույցի, հողի օտարման գործընթացների, մարդկանց իրավունքների շնորհման գործընթացի, փոխհատուցման և կենսապահովման վերականգնման միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով: ԱԵԱ-երին հնարավորություն կտրվի քննարկել փոխհատուցման և կենսապահովման վերականգնման գործընթացները և ներկայացնել իրենց հարցադրումները գործընթացների վերաբերյալ:
- Հավաքագրված տեղեկատվության հիման վրա կսահմանվեն իրավասության չափանիշները, ընդգրկելով հողի իրավասու և ոչ իրավասու սեփականատերերին, օգտագործողներին, թափոնների ոչ պաշտոնապես թույլատրվող հավաքողներին, ինչպես նաև թափոնների կառավարման ընկերությունների աշխատողներին, ովքեր կարող են այլընտրանքային աշխատանք փնտրել, երբ փոքրածավալ աղբանոցները փակվեն: Այն դեպքում, երբ գյուղատնտեսական նշանակության օտարված հողը կազմում է հիմնական եկամուտը կամ տնտեսության ընդհանուր եկամուտի նշանակալից մասը, ապա այս հողատարածքի սեփականատերերը իրավասու են մասնակցելու կենսապահովման վերականգնման առաջարկվող գործողություններին:

ii) Իրավունքների սխեման և փոխհատուցման շրջանակը կսահմանվեն և կնորացվեն վերոնշյալ քայլերի տեղեկատվության հիման վրա, ազգային օրենսդրության և ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան:

- Իրավունքների սխեման սահմանում է ԱԵԱ-երի դասակարգերը և օժանդակությունը, փոխհատուցումը և

կենսապահովման վերականգնման սահմանը, որոնք ԱԵԱ-երն իրավասու են ստանալ: Հանրային խորհրդատվական հանդիպումների ընթացքում ներկայացվում է ԱԵԱ-երի դասակարգերը և իրավասության միջոցները:

- Իրավասությունների համար կասեցման օրը սահմանվում է ՎԶԵԲ-ի և ազգային օրենսդրության պահանջներին համապատասխան: Կասեցման օրվա մասին տեղեկատվությունը կհրատարակվի ծրագրով տուժած ողջ տարածքում:

iii) Կկատարվի հողի գնահատումը և փոխհատուցումը, որը ներառում է կառույցները, շենքերը, բերքը, դադարեցված տնտեսական գործունեությունները և բնական ռեսուրսների նկատմամբ մուտքի հնարավորության կորուստը և կներկայացվեն փոխհատուցման առաջարկները: Գնահատման գործընթացը ձեռնարկվելու է ՀՀ օրենսդրության համաձայն, սակայն ՎԶԵԲ-ի պահանջների համաձայն գույքի գնահատումը հաշվի չի առնելու գույքի մաշվածությունը: Թեև այս մոտեցման նպատակն է հասնել համապատասխան փոխհատուցման մակարդակների, այն դեպքում, երբ ազդակիր անձինք մերժում են փոխհատուցման առաջարկները, այն կարող է բողոքարկվել և լուծվել դատական կարգով, ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

iv) ՏԿ ԱԻՆ-ի կողմից փոխհատուցման վճարումը կատարվում է նախքան հողի օտարումը կամ տնտեսական գործունեությունների և բնական ռեսուրսների նկատմամբ մուտքի հնարավորության կորուստը: Փոխհատուցման վճարման մեթոդները կքննարկվեն ԱԵԱ-ների հետ, խորհրդատվական ժողովների ընթացքում:

v) Կենսապահովման վերականգնման օգնությունն ուղղված է թափոններ հավաքող անձանց և այլ ոչ պաշտոնապես թույլատրվող թափոններ հավաքող անձանց, ովքեր իրենց ապրուստի միջոցները ստանում են փակման ենթական աղբանոցների մուտքի հնարավորությունն օգտագործելով: ՀՕԿՎՇ-ի նպատակն է պահպանել կամ բարելավել ծրագրի հետևանքով տուժած անձանց կենսագործունեությունը, անկախ նրանց պաշտոնական զբաղվածությունից:

Բացի այդ, հողի վերականգնման ընդհանուր գործընթացը պետք է ներառի հետևյալ տարրերը, որոնք ավելի մանրամասն կքննարկվեն ԿՎՊ-ում:

Շարունակական հանրային խորհրդատվություն և իրապարակում (տես բաժին 7)

Բողոքարկման մեխանիզմի սահմանում (տես բաժին 8)

ՀՕԿՎԾ-ի իրականացման վերահսկում և գնահատում (տես բաժին 9)

## 5.2 ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄ

Ազդակիր անձանց, տնտեսությունների, սեփականության և այլ գույքի մանրամասն ցուցակագրումն անհրաժեշտ է կատարել նախքան շինարարական աշխատանքները սկսելը և նախքան առկա աղբանոցի փակվելը: Ցուցակագրումը պետք է ձեռնարկվի ՏԿ ԱԻՆ-ի կողմից կամ երրորդ կողմի ընկերության կողմից, որն ունի ցուցակագրման և հարցումներ կատարելու փորձառություն: Ցուցակագրման միջոցով տեղեկատվություն կհավաքվի կադաստրային նույնականացման և հողամասերի կոորդինատների, գույքի, հողի դասակարգի, հողամասի ծավալների և ցանկացած մշակվող մշակաբույսերի, ծառերի և կառույցների մասին, որոնք կարող են ազդեցության ենթարկվել ծրագրի իրականացման հետևանքով: Ցուցակագրման նպատակն է գրանցել Հրազդանի տեղանքի և փակվող աղբանոցների բոլոր ոչ պաշտոնապես թույլատրվող թափոններ հավաքողներին:

Անհրաժեշտ կլինի ձեռք բերել լրացուցիչ տեղեկատվություն, սահմանելու համար ազդեցության ենթարկված հողատարածքների ոչ իրավասու սեփականատերերին և օգտագործողներին: Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունը տեղեկատվություն կտրամադրի պաշտոնապես և ոչ պաշտոնապես թույլատրվող կենսագործունեությունների, գույքի, գործունեությունների և կառույցների մասին: Բոլոր ազդակիր անձինք, անկախ հողի նկատմամբ նրանց իրավական կարգավիճակից, ովքեր գրանցվել են ցուցակագրման ընթացքում, իրավասու են փոխհատուցման, ազգային օրենսդրության և ՀՕԿՎԾ-ում ներկայացված ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան:

## 5.3 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունը կիրականացվի, բնորոշելու համար հետևյալը.

Թե պաշտոնապես թույլատրելի և թե ոչ պաշտոնապես թույլատրելի կենսագործունեության զբաղվող բոլոր ազդակիր անձանց, մասնավորապես թափոններ հավաքող անձանց տղամարդիկ և կանայք:

Հողի սեփականության իրավունքի հատկանիշները և օգտագործումը, մշակաբույսերի խնամքը և բնական ռեսուրսների օգտագործումը:

ԱԵԱ-երի կենսագործունեությունը և կենսամակարդակը, մասնավորապես կորցրած հողատարածքից ստացված եկամուտը:

Խոցելի անձինք, ովքեր լրացուցիչ ուշադրություն են պահանջում՝ ծրագրից հավասարաչափ օգուտ ստանալու համար:

Գենդերային ցանկացած տարբերություն՝ կապված ռեսուրսների օգտագործման, զբաղվածության և կենսապահովման հնարավորությունների հետ:

Ազդակիր անձանց տնտեսությունների մակարդակների սոցիալ-տնտեսական տվյալները և նրանց ֆինանսական վիճակի և տնտեսական գործունեությունների վրա ծրագրերի ազդեցությունը:

Զբաղվածության կառուցվածքը և տնտեսական գործունեությունները, որոնք ձեռնարկվել են առաջնային տնտեսական գործունեություններից ստացված եկամուտները լրացնելու համար:

Հմտությունների և հնարավորությունների գնահատում՝ կենսապահովման միջոցառումները սահմանելու և զբաղվածության հնարավորությունները մեծացնելու նպատակով հետագա վերապատրաստման կարիքները որոշելու համար:

## 5.4 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԽԵՄԱ

Սույն բաժինը պարունակում է իրավունքների պայմանական սխեմա, որը սահմանում է ազդակիր անձանց դասակարգերը և փոխհատուցման այն միջոցառումները, որոնք նրանք իրավասու են ստանալ: Սխեման պայմանական է, քանի որ այն

սահմանում է հնարավոր բոլոր սցենարները և ազդակիր անձանց խմբերը։ Մանրամասն ՀՕԿՎՊ-ն տրամադրում է բարելավված և համապատասխանեցված իրավունքների սխեման, որը ներկայացնում է ցուցակագրման և վերլուծության հարցաթերթիկների արդյունքների հիման վրա սահմանված ազդակիր անձանց։ Աղյուսակ 5-1-ում ներկայացված իրավունքների այս սխեման պարունակում է ՎԶԵԲ-ի ԻՊ 5-ի պահանջներին համապատասխան իրավասությունները։ Սա նշանակում է, որ փոխհատուցում կտրամադրվի օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում ունեցող հողի, սեփականության և գույքի սեփականատերերին, ինչպես նաև օրենսդրության պահանջների չպահպանմամբ պետական գրանցում չունեցող անձանց, ովքեր ազդակիր սեփականություններում հանդիսանում են օգտագործողներ, վարձակալներ և բնավարձակալներ։ Իրավունքների սխեման նաև սահմանում է տնտեսական կորուստները և կենսագործունեության վրա ծրագրի ազդեցությունները։ Այս կորուստներն ընդգրկում են զբաղվածության կորուստ, գյուղատնտեսական նշանակության հողի կորուստ և ծրագրի արդյունքում եղած ցանկացած եկամուտի կորուստ։ Փոխհատուցման միջոցառումները պետք է ընդգրկեն տեղափոխման ցանկացած օգնություն, գործարքների ծախսերը և կենսագործունեությունը վերականգնելու նպատակով նախատեսված վերապատրաստումները։ Փոխհատուցման իրավասությունները կսահմանվեն ցուցակագրման տվյալների հիման վրա։ Ցուցակագրման ամսաթիվը կծառայի որպես իրավասությունների կասեցման ամսաթիվ, սակայն օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում ունեցող սեփականատերերը հնարավորություն կունենան փոխհատուցում ստանալ կասեցման օրվանից հետո։

Աղյուսակ 5-1 Իրավունքների սխեմա

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| Օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում ունեցող հողի և գույքի սեփականատերեր | Առնվազն 1 սեփականատեր | Հողի փոխհատուցման համար՝ հող տարածքում<br>Օգնություն տարածքում նմանատիպ հողամասեր բնորոշելու համար<br>Նոր հողամասում վերաբնակեցման գույք<br>Տեղափոխման նպաստ | ԿԱՄ | Հողի համար փոխհատուցում վերաբնակեցման արժեքով<br>Նոր սերմնաբույսերի ծեռքբերման համար փոխհատուցում՝ նոր հողամասը մշակելու համար, որը բավարար կլինի ծեռք բերելու առնվազն 1 տարվա պաշար<br>Դրամական փոխհատուցում գյուղատնտեսական ցանկացած սարքավորման համար, որը հնարավոր չի լինի տեղափոխել հողատարածքից<br>Բերքը հավաքելու իրավունք կամ բազմամյա ծառերի, բույսերի համար դրամական փոխհատուցում՝ ազդեցության ենթակա ծառերի վերատնկման արժեքով Տարեկան բերքը հավաքելու իրավունք կամ դրամական փոխհատուցում | ԵՎ | Աշխատանքի վերապատրաստման հնարավորություն և կենսապահովման վերականգնման այլ գործունեություններում մասնակցություն<br>Աջակցություն նոր հողատարածք գնելուց |
| Օրենսդրության պահանջների պահպանմամբ պետական գրանցում չունեցող հողի և գույքի սեփականատերեր | Տվյալներ չկան | ՀՀ օրենսդրության համաձայն, հողի գրանցումը նախքան հողի օտարումը անվճար է<br>Հողի փոխհատուցման համար՝ հող տարածքում<br>Նոր հողամասում վերաբնակեցման գույք<br>Տեղափոխման նպաստ | ԿԱՄ | Հողի համար փոխհատուցում վերաբնակեցման արժեքով<br>Նոր սերմնաբույսերի ծեռքբերման համար փոխհատուցում՝ նոր հողամասը մշակելու համար, որը բավարար կլինի ծեռք բերելու առնվազն 1 տարվա պաշար<br>Դրամական փոխհատուցում գյուղատնտեսական ցանկացած սարքավորման համար, որը հնարավոր չի լինի տեղափոխել հողատարածքից | ԵՎ | Աշխատանքի վերապատրաստման հնարավորություն և կենսապահովման վերականգնման այլ գործունեություններում մասնակցություն<br>Նոր հողատարածք գնելուն և գրանցելուն օգնություն |

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| | | | Բերքը հավաքելու իրավունք կամ բազմամյա ծառերի, բույսերի համար դրամական փոխհատուցում՝ տուժած ծառերի վերատնկման արժեքով<br>Տարեկան բերքը հավաքելու իրավունք կամ դրամական փոխհատուցում | | |
| Օրենսդրության պահանջների պահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքով գյուղատնտեսական հողի օգտագործողներ | Տվյալներ չկան | Ոչ իրավասու | Դրամական փոխհատուցում բերքի համար կամ բերքը հավաքելու իրավունք<br>Նոր սերմնաբույսերի ձեռքբերման համար փոխհատուցում, որը բավարար կլինի ձեռք բերելու առնվազն 1 տարվա պաշար<br>Դրամական փոխհատուցում գյուղատնտեսական ցանկացած սարքավորման համար, որը հնարավոր չի լինի տեղափոխել հողատարածքից | ԵՎ | Աշխատանքի վերապատրաստման հնարավորություն և կենսապահովման վերականգնման այլ գործունեություններում մասնակցություն<br>Օգնություն հողատարածքից տեղափոխելու այն սարքավորումները, որոնք հնարավոր են հեռացվել |
| Օրենսդրության պահանջների չպահպանմամբ անշարժ գույքի նկատմամբ չգրանցված իրավունքով գյուղատնտեսական հողի օգտագործողներ | Տվյալներ չկան | | | | |
| Պաշտոնական պայմանագիր ունեցող գյուղատնտեսներ, ովքեր աշխատում են ազդակիր հողամասերում | Տվյալներ չկան | Ոչ իրավասու | Դրամական փոխհատուցում պայմանագրային մնացած ժամանակահատվածը ծածկելու կամ այն քանակությամբ, որը կբավարարի աշխատավարձերին՝ մինչև սեզոնի վերջը | ԵՎ | Աշխատանքի վերապատրաստման հնարավորություն և կենսապահովման վերականգնման այլ գործունեություններում մասնակցություն |

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| Պաշտոնական պայմանագիր չունեցող գյուղատնտեսներ, ովքեր աշխատում են ազդակիր հողամասերում | | | | | | |
| Հողի և գույքի սեփականատերեր, ովքեր ժամանակավորապես կկորցնեն հողատարածքի մուտքի հնարավորությունը, թեև նրանք ունեն հողի նկատմամբ իրավականորեն ընդունելի պահանջներ | Տվյալներ չկան | Ժամանակավոր կացարան կամ դրամական փոխհատուցում, որը կբավարարի վարձակալության վճարների համար այն ժամանակատվածի ընթացքում, երբ գույքը հասանելի չէ | ԵՎ | Բերքը հավաքելու իրավունք, եթե համապատասխան է, և դրամական փոխհատուցում այն սեզոնի կամ սեզոնների համար երբ հողը հասանելի չէ | ԵՎ | Վերաբնակեցման օգնություն՝ ժամանակավոր կացարաններ տեղափոխվելու և վերադառնալու ժամանակ, երբ գույքը կրկին հասանելի կլինի |
| Հողի և գույքի օգտագործողներ, ովքեր ժամանակավորապես կկորցնեն հողատարածքի մուտքի հնարավորությունը, թեև նրանք ունեն հողի նկատմամբ իրավականորեն ընդունելի պահանջներ | | | | | | |

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| Ազդակիր սեփականության պաշտոնապես թույլատրված և ոչ պաշտոնապես թույլատրված վարձակալներ | Տվյալներ չկան | Օժանդակում նոր տեղանք տեղափոխվելուն և կացարանի զբաղեցման ընթացքում վարձակալների անվտանգության ապահովում Assistance to relocate to new location and ensure security of tenure for tenants Տեղափոխման նպաստ Moving allowance | ԵՎ | Երե ծանուցման ժամկետը չի բավարարում նոր կացարան գտնելու համար, ապա դրամական փոխհատուցում՝ 3 ամսվա ժամանակավոր կացարանի համար If notice period is not sufficient to find new accommodation, cash compensation for temporary accommodation for a period of 3 months | ԵՎ | Աշխատանքի վերապատրաստման հնարավորություն և կենսապահովման վերականգնման այլ գործունեություններում մասնակցություն |
| Ոչ պաշտոնապես թույլատրված աղբ հավաքողներ, ովքեր վաստակում են իրենց ընդհանուր եկամուտի ավելի քան 20%-ըՀրազդանի աղբավայրում կամ փակվող աղբանոցներում, դրանց դադարեցման ամսաթվի դրությամբ (աշխատանքային տարիքի հասած բնակչություն) | Մոտ 20-25 | Ոչ իրավասու | | 3 ամ ս վ ա նպաս տ , որ ն ըս տ սո ց ի ալ -տն տե ս ակ ան հ ե տազ ո տո ւ թյ ան տվյ ալ ն ե ր ի կազ մ ո ւ մ է աղ ք ավ այ ր ի ց ստաց վ ած մ ի ջ ի ն եկ ամ ո ւ տը | ԵՎ | Մասնագիտական վերապատրաստման, ֆինանսական գիտելիքների վերապատրաստման և այլ դասընթացների մասնակցություն, որոնք անհրաժեշտ են աշխատանքի տեղավորման համար Աջակցություն՝ բնորոշելու այլընտրանքային զբաղվածության հնարավորությունները Օգնություն աշխատանքի դիմումի գործընթացին Գենդերային հարցերի հետ կապված օգնություն, այդ թվում երեխաների խնամք և տրանսպորտային ծառայություններ Օժանդակություն՝ ձեռ բերելու անձնական փաստաթղթեր, սոցիալական ապահովություն, առողջապահություն և կրթություն Մարզպետարանի միջոցով օժանդակություն Կոտայքի մարզում |

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | |
|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| | | | | զբաղվածության ծրագրերում ընդգրկվելու համար |
| Ոչ պաշտոնապես թույլատրված աղբ հավաքողներ, ովքեր վաստակում են իրենց ընդհանուր եկամուտի ավելի քան 20%-ը Հրազդանի աղբավայրում կամ փակվող աղբանոցներում, դրանց դադարեցման ամսաթվի դրությամբ (աշխատանքային տարիքի չհասած բնակչություն, ներառյալ երեխաներ, ուսանողներ, ծերեր) | | Ոչ իրավասու | Ոչ իրավասու | Օգնություն՝ ստանալու անձնական փաստաթղթեր, որոնք սոցիալական ապահովության և կրթության հնարավորություն կտան<br>Օգնություն ՀԿ-ների և այլ միջազգային կազմակերպությունների կ ո ղ մ ի ց տր ամ ադ ր վ ո ղ սոցիալական օգնության համար դիմելուն<br>Լրացուցիչ օժանդակություն, ինչպես օրինակ հասարակական տրանսպորտը ֆինանսական գիտելիքների վերապատրաստում |
| Ոչ պաշտոնապես թույլատրվող աղբ հավաքողներ, ովքեր վաստակում են իրենց ընդհանուր եկամուտից ավելի քիչ քան 20%-ը Հրազդանի աղբավայրում կամ փակվող աղբանոցներում, դրանց դադարեցման ամսաթվի դրությամբ | | Ոչ իրավասու | Ոչ իրավասու | Մասնագիտական վերապատրաստման, ֆինանսական գիտելիքների վերապատրաստման և այլ դասընթացների մասնակցություն, որոնք անհրաժեշտ են աշխատանքի տեղավորման համար<br>Աջակցություն՝ բնորոշելու այլընտրանքային զբաղվածության հնարավորությունները<br>Օգնություն աշխատանքի դիմումի գործընթացին<br>Գենդերային հարցերի հետ կապված օգնություն, այդ թվում երեխաների |

| ԱԶԴԱԿԻՐ ԱՆՁԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳԸ | ՄԵՐԺՈՒՄ ԱԶԴԱԿԻՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ * | ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | | |
|---|---|---|---|---|
| | | ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ, ՀՈՂ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ | ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ | ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՅԼ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ |
| | | | | խնամք և տրանսպորտային ծառայություններ<br>Օժանդակություն՝ ձեռ բերելու անձնական փաստաթղթեր, սոցիալական ապահովություն, առողջապահություն և կրթություն<br>Մարզպետարանի միջոցով օժանդակություն Կոտայքի մարզում զբաղվածության ծրագրերում ընդգրկվելու համար |
| Կոշտ թափոնների կառավարման ընկերությունների աշխատողներ, ովքեր կորցնում են իրենց աշխատանքը առկա աղբանոցների փակման արդյունքում | Տվյալներ չկան | Ոչ իրավասու | Ոչ իրավասու | Մասնագիտական վերապատրաստման, ֆինանսական գիտելիքների վերապատրաստման և այլ դասընթացների մասնակցություն, որոնք անհրաժեշտ են աշխատանքի տեղավորման համար<br>Աջակցություն՝ բնորոշելու այլընտրանքային զբաղվածության հնարավորությունները<br>Օգնություն աշխատանքի դիմումի գործընթացին<br>Գենդերային հարցերի հետ կապված օգնություն, այդ թվում երեխաների խնամք և տրանսպորտային ծառայություններ<br>Օգնություն սոցիալական ապահովություն ստանալուն<br>Մարզպետարանի միջոցով օժանդակություն Կոտայքի մարզում զբաղվածության ծրագրերում ընդգրկվելու համար |

*Ներկայացված թվերը միայն նախատեսումներ են, ազդակիր մարդկանց և տնային տնտեսությունների փաստացի քանակը կհաստատվի ցուցակագրումից և հարցումից հետո

## 5.5 ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հողի, մշակաբույսերի և գույքի գնահատումը կիրականացվի ազգային օրենսդրության պահանջների համաձայն: Կորցրած կենսագործունեության գնահատումը պետք է կատարվի միջազգային բարեխիղճ գործունեության հիման վրա, այս հարցի վերաբերյալ ազգային օրենսդրության պահանջների բացակայության պատճառով: Վերամշակված թափոնների արժեքի և եկամուտի մասին որոշ տեղեկատվություն ձեռք է բերվել 2015թ.-ի մայիսին տեղանք կատարած այցելության ընթացքում, այնուամենայնիվ ավելի մանրամասն տեղեկատվություն պետք է ձեռք բերել սոցիալ-տնտեսական վերլուծության և հարցազրույցների ընթացքում, որոնք կանցկացվեն այն ձեռնարկատիրությունների հետ, որոնք թափոնները՝ հավաքող անձանցից ձեռք են բերում թափոնները՝ վերամշակման նպատակով:

Հողի գինը սահմանվում է կառավարության կողմից՝ բարձր գնով, ուստի շուկայական գործարքները սահմանափակ են: Այս սահմանված գինը շուկայական արժեքից բարձր է և գործարքներից հետո վճարման ենթակա հարկերը նույնպես նշանակալիորեն բարձր են: Պետությունից հողի վարձակալությունը Հայաստանում տարածված գործառույթ է բարձր գներ և հարկեր վճարելուց խուսափելու համար: Մասնավոր հողը մասնավոր անհատներին վարձակալության տալու գործընթացը հազվադեպ է հանդիպում Հայաստանում, թեև հնարավոր է հանդիպել ոչ պաշտոնապես թույլատրվող եղանակով կատարված նման գործընթացներ: Հողի գնահատման գործընթացը պետք է իրականացվի ազգային օրենսդրության պահանջների և, որտեղ կիրառելի է, սահմանված գների համաձայն, հակառակ դեպքում կկիրառվեն ՎԶԵԲ-ի և միջազգային բարեխիղճ գործունեության պահանջները:

## 5.6 ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄ

Հողի սեփականատերերին կամ օգտագործողներին կանխիկ վճարումները պետք է կատարվեն ազգային օրենսդրության և ՎԶԵԲ-ի պահանջներին համապատասխան: Քանի որ սույն ՀՕԿՎՇ-ն հետևում է ՎԶԵԲ-ի պահանջներին, ապա փոխհատուցման բոլոր վճարումները և կենսապահովման վերականգնման միջոցառումները կիրականացվեն նախքան ազդակիր աղբանոցների փակվելը, հողի օտարման գործընթացների և զբաղվածության կորուստը:

Շահագրգիռ կողմերի հանդիպումները պետք է տեղեկացնեն ազդակիր անձանց փոխհատուցման ուղիների մասին՝ ըստ

իրենց կարիքների և նախասիրության: Նախընտրելի ուղիներն են բանկային հաշիվները, փոքրածավալ մարումները և հող՝ հողի դիմաց փոխատուցումը փոխհատուցման գումարի անտնտեսավարությունից խուսափելու համար:

Բնեղենով փոխհատուցման և ոչ դրամական փոխհատուցման միջոցները կներկայացվեն ՀՕԿՎՊ-ով սահմանված եղանակով, որը կմշակվի ծրագրի զարգացման ընթացքում: Ի տարբերություն կանխիկ փոխհատուցման, կենսապահովման վերականգնման միջոցառումները կշարունակվեն նույնիսկ ծրագրի շահագործման փուլի ընթացքում, այնպես ինչպես կսահմանվի ՀՕԿՎՊ-ով, անհրաժեշտության դեպքում:

## 5.7 ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

ՎԶԵԲ-ի ԻՊ 5-ի համաձայն այն անձինք, ում կենսագործունեությունը ծրագրի կողմից ազդեցության են ենթարկվել, իրավասու են կենսապահովման վերականգնման միջոցառումների, որոնց նպատակն է բարելավել կամ վերականգնել կենսամակարդակը և կենսագործունեությունները առնվազն այն մակարդակով, որն առկա էր նախքան ծրագրի իրագործումը:

ՏԿ ԱԻՆ-ը պետք է նախագծի կենսապահովման վերականգնման համապատասխան օգնություն, օգտագործելով սոցիալ-տնտեսական հարցումների արդյունքները, որոնք իրականացվել են կենսագործունեության և եկամուտների ծրագրից կրած ազդեցությունները գնահատելու և հաշվարկելու համար: Կենտրոնանալով թափոնների ոչ իրավասու հավաքողների վրա, վերլուծությունը հնարավորություն կտա պատկերացում կազմել աշխատանքային ռեժիմի, եկամուտների և կենսագործունեությունների մասին: Թափոններ հավաքողների այլընտրանքային զբաղվածությունը նպաստելու համար կիրականացվեն խորհրդատվական գործառույթներ, մասնավորապես հաշվի առնելով ծրագրում և կոշտ թափոնների նոր կայանքում զբաղվածության ապահովման հնարավորությունները: Արդեն
կոշտ թափոնների կառավարման համար նախատեսված հատուկ նպատակների մեքենան պահանջում է 23 մշտական աշխատող, որոնք պատասխանատու կլինեն աշխատանքի տարբեր ասպեկտների համար: Այս թիվը կարող է ավելանալ քանի որ առկա աղբանոցների փակումը և մեկուսացումը, մուտքա
ճանապարհների և այլ ժամանակավոր և մշտական

շինությունների կառուցումը կստեղծեն լրացուցիչ հնարավորություններ:

Պաշտոնապես ոչ թույլատրելի թափոն հավաքող անձանց ( որոնց դրսևորվում) կենսապահովումը կարևոր խնդիր է, որը պահանջում է նրբազգաց մոտեցում: Առաջին որն աշխատանքի ռեժիմի տեսանկյունից առավել քիչ փոփոխություն է պահանջում, թափոններ հավաքողներին պաշտոնապես ձևակերպել և վերապատրաստելն է՝ Հրազդանի կոշտ թափոնների կայանքում կամ տարածքում այլ աղբանոցների թափոնների կառավարման համար պատասխանատու ընկերություններում աշխատանքի ընդգրկելու նպատակով: Թափոնն զբաղվածության մասին կարող են դժկամությամբ հայտարարել ծանոթներին և ընտանիքի անդամներին, ուստի հնարավոր է, որ նրանք չհետաքրքրվեն թափոնների կառավարման համակարգում պաշտոնապես ձևակերպված աշխատանքով: Տեղեկանքի ժողովրդագրական տվյալների համաձայն տարիքային խմբերը տարբեր են՝ երիտասարդ և միջին տարիքի տղամարդիկ և կանայք, մինչև մեծահասակ տղամարդիկ: Այն փաստը, որ ըստ իրենց հայտարարության իրենք ոչ մի այլ զբաղվածություն չունեն, նույնիսկ գյուղատնտեսության և շինարարության ոլորտի սեզոնային աշխատանքներում, նշանակ են փակման ենթակա աղբանոցներից և Հրազդանի աղբավայրերից, որը պետք է արդիականացվի և, որտեղ հասարակության մուտքն այլևս խիստ սահմանափակ կլինի: Խորհրդատվական գործունեության միջոցով պետք է սահմանել թափոններ հավաքողների այն հնարավորությունները, որոնք արտացոլում են իրենց կարիքներն ու հմտությունները:

Ակնկալվում է, որ թափոններ հավաքող որոշ անձինք կնախընտրեն չընդգրկվել կենսապահովման միջոցառումներում և կտեղափոխվեն տվյալ շրջանի ավելի փոքր աղբանոցներ՝ այսպիսով առաջացնելով բնական միգրացիա:

## 5.8 ՀՈՂԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՆՍ ՊԼԱՆ

Ստորև ներկայացված քայլերի միջոցով անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքելուց և մանրամասն ՀՕԿՎՊ-ն նախապատրաստելուց հետո անկախ փորձագետները պետք է ուսումնասիրեն ՀՕԿՎՊ-ն՝ հավաստիանալու համար, որ այն

բավարար է, կամ որ անհրաժեշտ է ներառել հողի օտարման գործողությունների համար մանրամասն պլաններ: Այս պլանը պետք է հիմնված լինի ՀՕԿՎԾ-ի վրա և պետք է օգտագործի ազդակիր խմբերի, հողի սեփականատերերի, կոշտ թափոնների կառավարման ընկերության աշխատակիցների և թափոններ հավաքող անձանց մասին մանրամասն տեղեկատվությունը և իրենց սոցիալ-տնտեսական կարգավիճակը սահմանելու համար համապատասխան մեղմացման և կենսապահովման վերականգնման միջոցառումները:

Մանրամասն ՀՕԿՎՊ-ն պետք է պարունակի նորացված և համապատասխանեցրած իավունքների սխեման, թափոններ հավաքող անձանց համար խորհրդատվական գործունեությունները, իրականացման մեխանիզմը, կենսապահովման վերականգնման գործունեությունները վերահսկելու և գնահատելու պլանները: Մանրամասն ՀՕԿՎՊ-ն կմշակվի, Հրազդանի կոշտ թափոնների կայանքի ամբողջական և մանրամասն նախագծերը հաստատվելուց և ազդակիր թափոններ հավաքող անձանց վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ներկայացնելուց հետո: ՀՕԿՎՊ-ն վերջնական տեսքի կբերվի շահագրգիռ կողմերի հետ խորհրդատվության միջոցով, նախքան հողի համար ցանկացած բանակցությունը, հողի օտարման գործընթացը կամ կենսագործունեության հնարավորությունների սահմանափակումը սկսելը:

Հրազդանի կոշտ թափոնների կայանքի մանրամասն նախագծերը նույնպես կներկայացնեն ծրագրի հողային պահանջները և նրա ենթակառուցվածքը, ինչպես նաև ՍՊԳ-ն, որն ըստ հավանականության 300 մ է:

# 6 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՎ ՊԱՇԱՐՆԵՐ

Ելակետային տվյալները հավաքագրվել են ծրագրի նախորդ փաստաթղթերից և 2015թ.-ի մայիսին տեղանք կատարած այցելության ժամանակ: Տեղանքի այցելությունը ներառում էր 5 աղբանոցների այցելություններ, որոնք ենթակա են փակման, ներառյալ Հրազդանի աղբանոցը, որը պետք է մեկուսացվի Հրազդանի աղբավայրի կառուցումից և շահագործումից հետո:

## 6.1 ՀՈՂԻ ՕՏԱՐՈՒՄ ԵՎ ՀՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հրազդանի ներկա աղբանոցի տեղանքի մերձակայքում կա բնակելի սեփականություն, բերքատու այգի և ցանկապատ: Սրանք ազդեցություն կկրեն շինարարական աշխատանքներից և ամենայն հավանականությամբ գտնվում են ՍՊԳ-ում: Բնակարանային այս սեփականության համար հնարավոր է ֆիզիկական տեղափոխության անհրաժեշտություն առաջանա, սակայն դա կհաստատվի ավելի ուշ փուլում, երբ պատրաստ կլինեն ամբողջական և մանրամասն նախագծերը, Հրազդանի նոր աղբավայրի սահմանագծի համար ծրագրով սահմանված տեղանքի սահմանագծի առանձնահատկությունները, ՍՊԳ-ի սահմանները և ճանապարհների, մալուխների ու խողովակաշարերի անցումները (որոնք կարող են պահանջվել):

ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան նախատեսվում է որ ՍՊԳ-ն կլինի 300 մ, ինչպես սահմանված է տարածաշրջանային և համայնքային բոլոր աղբանոցների համար գործող կանոնակարգում: Բերքատու այգին՝ համարվում է որպես ժամանակավոր կացարան և ամառանոց՝ մրգի և բանջարեղենի միջոցով ապահովելով ապրուստի միջոցներ, սակայն այն չի կարող գնահատվել, եթե բերքը միայն անձնական օգտագործման համար է: Առավել ազույը 1-2 հեկտար կազմող հողից ստացված մրգի և բանջարեղենի բերքը չի կարող նշանակալի եկամուտ ապահովել: Ուսումնասիրված տեղանքից ավելի հեռու՝ մայրուղու ճանապարհի երկայնքով, կան մի շարք այլ տներ, խորտկարաններ և կառույցներ: Սրանք տեղանքից բավականին հեռու են և հնարավոր է՝ սահմանված ՍՊԳ-ից դուրս: Այս ձեռնարկատիրությունները կարող են դրական ազդեցություն կրել տեղանքում աշխատողների քանակի աճի պատճառով: Քանի որ տեղանքի և ամենամոտ տեղակայված բնակավայրի հեռավորությունը 500 մ է, շինարարական փուլի ընթացքում բնակավայրում և դեպի տեղանք ձգվող ճանապարհների երկայնքով հնարավոր է ձեռնարկատիրության զարգացում:

Դեպի ամենամոտ բնակավայրը և տեղանք տանող ճանապարհների շուրջ բնորոշվել են մի քանի հողամասեր, որոնք գտնվում են ՍՊԳ-ում: Այս հողատարածքները հավանաբար պատկանում են մերձակայքի բնակավայրերի բնակիչներին և մշակվում են նրանց կողմից: Տեղանք կատարած այցելության ժամանակ այնտեղ գտնվում էին ձեռքով աշխատող մարդկանց խմբեր: Հարցազրույցների արդյունքների հիման վրա Հայաստանում կադաստրային համակարգը խիստ է, ուստի երբ հողը մշակվում է, այն կամ պատկանում է հողը մշակող անձին կամ վարձակալված է պետությունից: Քիչ հավանական է, որ հողի ոչ օրինական

օգտագործումը խնդրահարույց լինի, սակայն դա չի կարող ամբողջովին բացառվել, հատկապես մասնավոր անձանցից հողի վարձակալումը: Ցուցակագրումը և վերլուծության գործունեության ժամկետների պլանավորումը պետք է կատարվի գյուղատնտեսական սեզոնների համաձայն, որը հնարավորություն կտա գրանցել հողի բոլոր սեփականատերերին և օգտագործողներին, ներառյալ հողի ոչ պաշտոնապես թույլատրված օգտագործողները կամ վարձակալողները:

Հրազդանի տեղանք տանող ճանապարհները պատշաճ կերպով ասֆալտապատ չեն, իսկ ուղղակի մուտքի ճանապարհները նեղ, բնահողային են: Բացի հիմնական մուտքային ճանապարհից կան գյուղերի միջով անցնող ճանապարհներ, որոնք կարող են օգտագործվել շինարարական նպատակներով: Մուտքային տարբեր ճանապարհների և մայրուղու երկայնքով կարող են լինել այլ տներ, որոնք ազդեցության կենթարկվեն ծրագրից; Ամբողջական մանրամասն նախագծերով կհաստատվեն համապատասխան ենթակառուցվածքի և երթուղիների պլանները: Սա նաև հետագայում տեղեկատվություն կտրամադրի հողի օտարման և ծրագրի ազդեցությունների գնահատման վերաբերյալ:

Հնարավոր է առաջանան զենդերային հարցեր՝ կապված փոխհատուցման և հողի սեփականատերերի ծրագրից ստացված օգուտների հետ, քանի որ հողը սովորաբար գրանցվում է ամուսնու անունով կամ որպես ժառանգություն՝ որդիների անունով, եթե դուստրն ամուսնացած է: Հավաստիանալու համար, որ տնտեսության յուրաքանչյուր անդամ ծրագրից հավասարաչափ օգուտներ է ստանում և ունի փոխհատուցման միջոցառումների հնարավորություն, ընտանիքի իգական սեռի անդամները կընդգրկվեն հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործառույթների բոլոր փուլերում՝ ապահովելու համար նրանց իմաստալից մասնակցությունը որոշումներ կայացնելու գործընթացում:

## 6.2 ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն ՀՕԿՎԾ-ի նպատակն է ուշադրություն բևեռել Հրազդանի տեղակայքի և թափոններ հավաքող անձանց վրա, ովքեր ազդեցություն են կրում այլ աղբանոցների փակման պատճառով: Այցելություններ են կատարվել մի քանի աղբանոցներ, որոնք փակվելու են Հրազդանի աղբավայրի շահագործումից հետո, ինչպես նաև ուսումնասիրվել են մի շարք այլ տներ և բերքատու այգիներ, որոնք գտնվում են

աղբանոցների մերձակայքում: Տվյալ տները չեն ենթարկվում ծրագրի ազդեցության և կարող են ավելի բարենպաստ պայմաններում հայտնվել, երբ մերձակայքի աղբանոցները կփակվեն և կմեկուսացվեն: Քաղաքապետը, ով մեզ ուղեկցում էր տեղանք կատարած մի քանի այցելությունների ժամանակ, ոչ պաշտոնապես հայտարարեց, որ տվյալ տները ՍՊԳ-ից դուրս են, ինչպես սահմանված է ՀՀ համապատասխան օրենսդրությամբ:

ՔՈՎԻ հաշվետվության և վերջերս կատարած հետազոտության արդյունքներից ելնելով Հրազդանի տեղանքում և փակման ենթակա աղբանոցներում աշխատում են 20-25 թափոններ հավաքող անձինք: Թափոններ հավաքող անձանց և կոշտ թափոնների կառավարման ընկերության աշխատակիցների հետ հարցազրույցների միջոցով հնարավոր չէր սահմանել թափոններ հավաքող անձանց ճշգրիտ քանակը, թեև հետազա հաշվարկների արդյունքում այն կազմում էր 20-25 մարդ:

Չարենցավանի, Հրազդանի և Աբովյանի աղբանոցների թափոններ հավաքող երեք տղամարդկանց հետ հարցազրույցի արդյունքը ցույց տվեց, որ նրանց պատմությունները նման էին միմյանց. նրանք աշխատում էին արդյունաբերության ոլորտում և խորհրդային միության փլուզումից հետո դարձել են գործազուրկ: Որպես միջին տարիքի արտադրության ոլորտի աշխատողներ նրանց փորձն ու հմտությունները աշխատանքային շուկայում այլևս պահանջարկ չունեին, ուստի նրանք ստիպված էին փնտրել այլընտրանքային աշխատանք: Նրանք հայտարարեցին, որ որևէ այլ զբաղվածություն չունեն, նույնիսկ գյուղատնտեսության և շինարարության ոլորտում չունեն սեզոնային աշխատանքներ և որ տարիներ շարունակ զբաղվել են թափոններ հավաքելով: Թափոններ հավաքող անձինք հիմնականում հավաքում են պլաստմասսա, մետաղ, թուղթ և երբեմն՝ ապակի: Եկամուտների վերաբերյալ հարցին պատասխանեցին, որ միջին օրական վաստակը կազմում է 3000-4000 ՀՀ դրամ, նշելով, որ ձմռանը եկամուտն ավելի ցածր է, քան ամռան ամիսներին: Աբովյանի աղբանոցում, մեզ տրված տեղեկատվության համաձայն, միջին ամսական եկամուտը 100,000-150,000 ՀՀ դրամ է: Թափոններ հավաքող անձինք հաստատեցին, որ տեղանքում աշխատում են գրեթե ամեն օր: Թափոնների տեսակավորումը կատարվում է աղբանոցում, ապա հավաքումը կատարվում է հեռախոսով:

Հարցազրույցի հիման վրա ստացված տվյալների համաձայն վերամշակվող նյութերի գները ներկայացված են ստորև, աղյուսակ 6-1-ում:

**Աղյուսակ 6-1 վերամշակված նյութերի գինը**

| ՆՅՈՒԹ | ՄԻԱՎՈՐ | ԳԻՆ |
|---|---|---|
| Պլաստմասսա | կգ կամ մեծ կապույտ պայուսակ | 20 ՀՀ դրամ կամ 1500 ՀՀ դրամ |
| Պղինձ | կգ | 1500 ՀՀ դրամ |
| Ապակի | տոննա | 27 000 ՀՀ դրամ |
| Թուղթ – ստվարաթուղթ | կգ | 15 ՀՀ դրամ |
| մետաղ (սովորական) | կգ | 20-25 ՀՀ դրամ |

Չարենցավանի աղբանոցի տեղանքում թափոններ հավաքող անձի հետ հարցազրույցում նա տեղեկացրեց, որ բացի իրենից տեղանքում կան ևս 6-7 անձինք, ովքեր հավաքում են թափոնները՝, նրանցից մի քանիսը հավաքում են որպես անասնակեր՝ իրենց տնտեսությունում խոզերի կերակրման համար: Նրանք բնակվում են մուտքի ճանապարհի տարածքում գտնվող տներում՝ գերեզմանոցների դիմաց, իսկ մյուսները թափոնները հավաքում են վերամշակելու և վերավաճառելու նպատակով: Հրազդանի աղբանոցում, նրա տարածքից դուրս նկատեցինք թափոններ հավաքող երկու կին և մոտեցող մի մեքենա, որով եկան երկու այլ թափոն հավաքող անձինք, երբ թափոնների մեքենան նոր հեռացավ տեղանքից: Կոշտ թափոնների կառավարման ընկերության աշխատակիցներից մեկի տեղեկատվության համաձայն տեղանքում կան 2-3 մշտական թափոն հավաքող անձինք, թեև նրանք տեղաք են գալիս շաբաթական մեկ կամ երկու անգամ:

Աբովյանի աղբանոցի տարածքում հարցման ենթարկված թափոններ հավաքող անձը հաստատեց, որ տեղանքում աշխատում են 5-7 այլ թափոն հավաքողներ:

Եղվարդի տարածքում թափոններ հավաքող մի անձ հրաժարվեց պատասխանել հարցերին: Կոշտ թափոնների կառավարման ընկերության աշխատակիցը տեղեկացրեց, որ նա չի ճանաչում որևէ մեկին, ով պաշտոնապես աշխատում է ընկերությունում և զբաղվում է պաշտոնապես ոչ թույլատրելի վերամշակումով:

Մենք նկատեցինք, որ որոշ թափոն հավաքող անձինք ունեն բջջային հեռախոսներ և օգտագործում են ԱՊՄ: Հարցվողներից մեկը հայտարարեց, որ նա տեղանքի մենեջերն է, որը նախատեսում է կազմակերպչական բարձր մակարդակ. աղբատար մեքենաների կազմակերպում և թափոնները համապատասխան վայրում դատարկելը, ինչպես նաև աղբահավաք մեքենաների կազմակերպումը, երբ վերավաճառելու համար բավարար քանակությամբ վերամշակման ենթակա նյութեր կան: Մյուս տեղանքներում թափոններ հավաքող անձինք հայտարարեցին, որ իրենք որևէ

կերպ չեն ազդում թափոնների դատարկման և հավաքման ժամանակի վրա և համապատասխան իրավասու մարմինների հետ որևէ առնչություն չունեն: Բոլոր հարցվողները հաստատեցին, որ կոշտ թափոնների կառավարման ընկերությունները իրենց անձնակազմի միջոցով կանոնավոր կերպով իրականացնում են տեղանքի տեխսպասարկման և ճանապարհների մաքրման աշխատանքներ, ուստի և կարող են հասկանալ թափոնների հավաքման աշխատանքների կառուցվածքը:

Հրազդանի աղբանոցում նկատեցինք մի քանի աղբ հավաքող կանանց, ովքեր դուրս էին գալիս տեղանքից: Նպատակահարմար չգտանք նրանց կանգնեցնել և հարցեր տալ իրենց գործունեության վերաբերյալ: Թեև մյուս բոլոր աղբանոցներում չնկատեցինք կանանց և երեխաների, կարելի է վստահորեն ենթադրել, որ նրանք առնվազն Հրազդանի աղբանոցում են ընդգրկված:

Բոլոր հարցվողները հայտարարեցին, որ քաղաքներում թափոններ հավաքողներն արդեն մշակում են աղբանոցներից ստացված թափոնները: Պարզվեց, որ թափոնների հավաքումը քաղաքներում և գյուղերում լայնածավալ գործունեություն է, որը ձեռնարկվել է բազմաթիվ անհատների և պատահական թափոններ հավաքող անձանց կողմից: Սույն փաստաթղթի խնդիրն է ուշադրությունը բևեռել Հրազդանի աղբանոցի և փակման ենթակա աղբանոցներում աշխատող թափոններ հավաքող անձանց վրա, ուստի ՀՕԿՎԾ-ն չի կարող կիրառելի լինել քաղաքներում կամ գյուղերում թափոններ հավաքող այն անձանց համար, ովքեր չեն աշխատում այս աղբանոցներից որևէ մեկում:

Թիմային այցելությունը որոշ օգտակար տեղեկատվություն տրամադրեց թափոններ հավաքող անձանց կենսագործունեությունների և աշխատանքային ռեժիմի վերաբերյալ, որը սակայն համապարփակ տեղեկատվություն չէ: Անհրաժեշտ է նախքան ՀՕԿՎԾ-ն նախապատրաստելը հավաքել լրացուցիչ տեղեկատվություն:

# 7 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ, ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՒՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անհրաժեշտկլինի կազմակերպել հանրային հանդիպումներ և շահագրգիռ կողմերի ու քաղաքապետարանների վարչական շրջանների ներկայացուցիչների հետ խորհրդատվություններ՝ շահագրգիռ կողմերի մասնակցության պլանի (ՇԿՄՊ) համաձայն: Անհրաժեշտ է կազմակերպել հարցազրույցներ և առանձին հանդիպումներ թափոններ հավաքող անձանց և օտարման ենթակա հողի սեփականատերերի և օգտագործողների հետ, (ովքեր կկորցնեն ազդակիր հողի՝ նկատմամբ իրենց մուտքի հնարավորությունը)՝ կենսապահովման վերականգնման իրենց նախընտրությունների մասին ավելի համապարփակ տեղեկատվություն ստանալու համար: Խորհրդատվական գործունեությունները պետք է կատարվեն ծրագրի ժամանակացույցի համաձայն և պետք է սկսվեն նախքան Հրազդանի աղբավայրի շինարարական աշխատանքները սկսելը և աղբանոցների փակումը:

ՏԿ ԱԻՆ-ը պարտավորվում է հանրությանը և ազդակիր անձանց տրամադրել ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն՝ նրանց իրազեկված մասնակցությունն ապահովելու նպատակով: ՀՕԿՎՇ-ն, ինչպես նաև ծրագրի այլ փաստաթղթերը կտեղակայվեն ՏԿ ԱԻՆ-ի և Կոտայքի համայնքի ինտերնետային կայքում, իսկ փաստաթղթերի թղթային հայերեն տարբերակները հասանելի կլինեն տեղական համայնքներում և քաղաքապետերի գրասենյակներում:

# 8 ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

Բողոքարկման մեխանիզմը, որը սահմանվել է ՇԿՄՊ-ի համաձայն, օգտագործվում է ՀՕԿՎՇ-ի և հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործընթացի վերաբերյալ ավելի ընդհանուր հարցեր, մեկնաբանություններ հավաքելու և հետադարձ կապ ապահովելու նպատակով: Այն պետք է ներդրվի հնարավորինս շուտ՝ շահագրգիռ կողմերի մեկնաբանությունները և հարցերը ստանալու, ժամանակին դրանց արձագանքելու համար, ինչպես նաև փոխհատուցման և կենսապահովման վերականգնման միջոցառումների

վերաբերյալ ֆիզիկական կամ տնտեսական կայունության խախտման պատճառով ազդեցության ենթարկված անձանց լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համար:

ՏԿ ԱԻՆ-ը պետք է սահմանի պաշտոնական համակարգ՝ բողոքների վերացման համար և պետք է հնարավորություն տա ազդակիր անձանց հայտնել իրենց բողոքները (այդ թվում անանուն) տարբեր միջոցներով, ներառյալ էլեկտրոնային փոստը, նամակները, հեռախոսազանգերը, անձնական այցելությունները ներկայացուցիչներին, ինչպես նաև բողոքարկման ձևն օգտագործելով, որը ներկայացված է Հավելված Ա-ում:

Բողոքները գրանցվում են բողոքների գրանցամատյանում, գրանցելով խնդրի մանրամասները, ստացման հաստատումը, ձեռնարկված միջոցառումները և խնդրի լուծման ամսաթիվը:

# 9 ՀՕԿՎՊ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԲՅՈՒՋԵ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՏԿ ԱԻՆ-ը պատասխանատվություն է կրում ՀՕԿՎԾ-ի բոլոր ասպեկտների իրականացման համար: Ծրագրի իրականացման տարբեր ասպեկտներում ընդգրկված կողմերը պետք է բավարարեն ՀՕԿՎԾ-ի և ապա մանրամասն ՀՕԿՎՊ-ի պահանջները:

Մանրամասն ՀՕԿՎՊ-ի իրականացումը սկսվելու է նախքան Հրազդանի շինարարական աշխատանքները սկսելը և նախքան մյուս քաղաքներում և գյուղերում աղբանոցների փակումը և մեկուսացումը: Ընդհանուր առմամբ ՀՕԿՎՊ-ի իրականացումը պետք է ունենա երեք հիմնական փուլեր.

1. Հանրային հանդիպումներ և սոցիալ-տնտեսական վերլուծություն (որոնք իրականացվում են) և բանակցային գործընթաց՝ կապված ֆիզիկական և տնտեսական կայունության խախտման հետ (որը սկսվում է): Մանրամասն ՀՕԿՎՊ-ն պետք է մշակվի այս փուլում հիմնված սոցիալ-տնտեսական վերլուծությունից ստացված տեղեկատվության վրա: Անհրաժեշտ կլինեն լրացուցիչ խորհրդատվություններ՝ ՀՕԿՎՊ-ն ազդակիր անձանց հետ քննարկելու համար:
2. Գույքային իրավունքների նախատեսում, փոխհատուցման վճարում, ՀՕԿՎՊ-ի և համապատասխան գործունեությունների իրականացում:
3. ՀՕԿՎՊ-ի վերահսկում և հաշվետվության ներկայացում:

ՀՕԿՎՊ-ն իրականացնելու համար անհրաժեշտ բյուջեն կսահմանվի ցուցակագրման և վերլուծության գործունեություններից հետո, երբ հայտնի կդառնա տնտեսությունների, հողատարածքների և թափոններ հավաքող անձանց փաստացի քանակը: Բյուջեն պետք է նախատեսի հողի օտարումը, փոխհատուցումը, կենսապահովման վերականգնումը և գնահատումը, ինչպես նաև չնախատեսված և վարչական ծախսերը: Կենսապահովման վերականգնման ծախսերը պետք է ներառվեն ծրագրի ընդհանուր ծախսերում:

Նախատեսվում են հատուկ վերահսկման միջեցառումներ՝ հավաստիանալու համար, որ ազդակիր անձանց կենսամակարդակը վերականգնվել է այն մակարդակով, որն առկա էր նախքան ծրագիրը, կամ բարելավվել է: Աղյուսակ 9-1-ում ներկայացված են պահանջվող վերահսկման հիմնական ցուցանիշներն ու հաճախականությունները:

**Աղյուսակ 9-1 վերահսկման ցուցանիշներ**

| ՑՈՒՑԱՆԻՇ | ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ DATA TO VALIDATE | ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|---|---|
| **Մուտքերի ցուցանիշներ** | | | |
| Հողի ձեռք բերման և կենսապահովման ծախսեր | Գործարքների ֆինանսական գրառումները | Տարեկան | ՏԿԱԻՆ |
| Տուժած մարդկանց քանակն ըստ դասակարգի | Ցուցակագրում և բողոքարկման մեխանիզմ | Եռամսյակային | ՏԿԱԻՆ |
| **Ելքերի ցուցանիշներ** | | | |
| Փոխհատուցման ստորագրված համաձայնագրերի քանակը, կենսապահովման վերականգնման միջոցառումներում ընդգրկված տուժած մարդկանց քանակը, հողի ստորագրված համաձայնագրերի քանակը | Տվյալների կառավարման համակարգեր | Ամսական | ՏԿԱԻՆ /խորհրդատուներ |
| Հողի համար փոխհատուցում ստացած կենսապահովման վերականգնման վերապատրաստում անցած մարդկանց քանակը, այլընտրանքային աշխատանք գտած մարդկանց քանաքը | Տվյալների կառավարման համակարգեր | Ամսական | ՏԿԱԻՆ |
| Տրամադրվել են ԿՎՊ կամ ՀՕԿՎՊ գործունեություններ | Տվյալների կառավարման համակարգեր | Ամսական | ՏԿԱԻՆ |
| Բողոքարկման մեխանիզմ | Բողոքների տեղեկամատյան | Ամսական | ՏԿԱԻՆ |

Շարունակական վերահսկումը, ՀՕԿՎՇ-ի և ապա՝ ՀՕԿՎՊ-ի իրականացման (ներառյալ վերը ներկայացված

ցուցանիշները) գնահատումը և պարբերական հաշվետվություններ ներկայացնելը կատարվում է ՏԿ ԱԻՆ-ի կողմից և պետք ընդգրկի հիմնական շահագրգիռ կողմերի, ինչպես օրինակ ազդակիր համայնքները, մասնակցությունը: Անհրաժեշտ կլինի իրականացնել աշխատանքների կատարման աուդիտ՝ ՀՕԿՎՇ-ով և ՀՕԿՎՊ-ով կատարված աշխատանքների հաջողությունները գնահատելու համար:

ՏԿ ԱԻՆ-ը եռամսյակային հաշվետվություններում պետք է ներառի վերահսկման տվյալները և ՀՕԿՎՇ և ՀՕԿՎՊ գործունեությունների առաջընթացի հաշվետվությունները հողի օտարման և կենսապահովման վերականգնման գործընթացի ընթացքում, ինչպես նաև ՎԶԵԲ-ին ներկայացվող տարեկան հաշվետվություններում ամփոփ ներկայացնի համապատասխան տեղեկատվությունը, ինչպես պահանջում է ծրագրի ընդհանուր բնապահպանական և սոցիալ ական մոնիտորինգը: ՏԿ ԱԻՆ-ը տարեկան հաշվետվություններում պետք է նաև ներկայացնի հանրությանը հասանելի կենսապահովման վերականգնման մոնիտորինգի տվյալները:

# ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՁԵՎԸ

ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

Կառավարության տուն, Հանրապետության հրապարակ, Երևան 0010
Հեռ: +374 (10) Ֆաքս: +374 Էլ.փոստ: kotayq.swm@gmail.com

# Կոտայքի կոշտ թափոնների կառավարման ծրագիր

# ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համար ՁԵՎ

**Մեկնաբանություններ և առաջարկություններ ներկայացնող անձի կոնտակտային տվյալները**

Խնդրում ենք գրանցել Ձեր անունը, հասցեն և էլ.փոստի հասցեն: Եթե ցանկանում եք մնալ անանուն, ապա դա խնդիր չէ: Խնդրում ենք պարզապես գրել ԱՆԱՆՈՒՆ ստորև ներկայացված պատուհանում: Ձեր մեկնաբանությունը այնդուհանդերձ կքննարկվի ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում: Դուք կարող եք գրել հաջորդ էջին կամ օգտագործել լրացուցիչ էջեր: Անհրաժեշտություն չկա լրացնելու այս ձևի մոխրագույն բաժինը: Դա նախատեսված է մեր կողմից Ձեր մեկնաբանությունները գրանցելու և Ձեզ պատասխանելու համար: Այս ձևը լրացնելուց հետո այն կարելի է ուղարկել ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն՝ նամակի, ֆաքսի կամ էլ.փոստի միջոցով: (տես վերը՝ կոնտակտային տվյալները).

| | |
|---|---|
| Անուն | |
| Հասցե | |
| Հեռախոս | Էլփոստի հասցեն |

Կոտայքի կոշտ թափոնների կառավարման ծրագրին վերաբերող մեկնաբանություններ և առաջարկություններ

Ցանկանու՞մ եք ստանալ տեղեկատվություն ծրագրի զարգացումների վերաբերյալ: ◻ Այո ◻ Ոչ
Եթե այո, ապա ինչպե՞ս կցանկանաք ստանալ այն ◻ հեռուստացույց ◻ նամակ ◻ պլակատ ◻ էլ.փոստ ◻ վեբ կայք
Հաղորդակցման ո՞ր լեզուն եք նախընտրում ◻ հայերեն ◻ ռուսերեն ◻ անգլերեն

*ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ*

*Ինչպե՞ս է ստացվել մեկնաբանությունը*
*◻ անձամբ ◻ հեռախոսով ◻ ընթերցասրահում ◻ փոստով ◻ էլ.փոստով ◻ այլ (խնդրում ենք նկարագրել)……………*

| *Մեկնաբանության գրանցման ամսաթիվը:* | *Մեկնաբանության համարը* | *Ում կողմից է գրանցվել* |
|---|---|---|
| | | |

| | |
|---|---|
| *Պահանջվում է պատասխան Այո/Ոչ* | *Պատասխանը նախապատրաստող պատասխանատու անձ* |
| *Պատասխանն ուղարկվել է (ամսաթիվ):* | *Պատասխանը գրանցվել է (ամսաթիվ):* |